ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2024թվականի N 106-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25-Ը ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 25-ը հուլիսի 2024 թվականի թիվ 10 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 25.07.2024թվականի թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

3. Արենիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ը անվանակոչելու և Արենի համայնքի ավագանու 26.06.2024թվականի թիվ 087-Ա և 06.06.2024թվականի թիվ 077-Ա որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին:

4. Արենի համայնքի ավագանու 25.01.2024թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2024թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելու մասին:

6. Բարերար Լիսա Գրիգորյանին Արենի համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին: